



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ Ս Խ Հ
Ե Ռ Ժ Ո Ղ Կ Ո Մ Ե Տ

ԲԺ. Ա. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՏՐԱԽՈՄԱ

ՍԵՆ-ԼՈՒՍ
ԳՐԱԳՐԱՐԱՆ

№ 2

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՖԵՐԵՎՐԱՆ-1926

THE
LIBRARY

UNIVERSITY OF CHICAGO

1911-1912

37-10-10
1911-1912
1911-1912


V

ՀԱՅԿ ԸՌԺՈՂԿԱԾԸՏ
№ 2 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԲԺ. Ա. ՆԱՎԱՍԵՐԿՅԱՆ

617.711-002.291

ՏՐԱԽՈՄԱ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1929

17442 A I 4546

Հրատ. № 1094

ՊԵՏՏՐԱՏԻ ՑԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրասենյ. № 3811(բ) Տիրաժ 3.000 Պատվ. 1087

Տ Ր Ա Խ Ո Մ Ա

Աչքի հիվանդութիւնները թեև մասն չեն պատճառում, բայց շատ մարդկանց զրկում են ամենաթանգագին բանից՝ աչքի լուսից:

Աչքի հիվանդութիւնները շատ են և բաժանվում են վոչ վարակիչ և վարակիչ հիվանդութիւնների: Վարակիչ հիվանդութիւնները նրանք են, վորոնք հիվանդներից անցնում են առողջներին:

Աչքի վարակիչ հիվանդութիւնների մեջ ամենից շատ տարածվածը և ամենավատանգավորը տրախոման է,

Փրախոման վարակիչ է. եա կուրացնում է մարդուն վորովհետև նա յերկար տարիներ անընդմիջ է մարդուն և վերջը նրա կուրութեան պատճառը դառնում: Կուրութիւնն ամենամեծ դժբախտութիւնն է: Կույր մարդն ուրախութիւն չունի, նրա համար ցերեկն եւ մութ գիշեր է: Նա բավական չէ, վոր չի տեսնում, բավական չէ, վոր չի կարող աշխատել, այլ դեռ կարիք ունի, վոր նրա համար ուրիշն աշխատի, վորովհետև նա ալիտի ուտի-խմի, հագնի, բնակարան և խնամող ունենա:

Կուլը մարդը մի ծանր բեռ է թե ընտանի-
քի և թե հասարակության համար:

ԻՆՁՊԵՍ Ե ՍԿՍՎՈՒՄ ՅԵՎ ԶԱՐԳԱՆՈՒՄ ՏՐԱԽՈՄԱՆ

Տրախոման կոպերի հի-
քիվանգուլքյուն է վանդություն է: Առողջ կո-
պերը և նրանց յեզրին
բուսնող արտաճանդները պաշտպանում են
աչքերը փոշուց, քրտնքից և դրսի վտանգներից:
Յեթե առողջ մարդու կոպերը շրջենք, կը-
տեսնենք, վոր հակառակ կողմը ծածկված է բա-
րակ, բաց վարդազույն, կոկ և փայլուն թաղան-
թով: Այդ թաղանթը թաց է, վորովհետև նրա
վրա բացվում են փոքրիկ խողովակների ծակո-
տիներ, վորոնցից արցունք է դուրս գալիս և
մշտապես լվանում աչքը:

Առաջին օրջան Յերբ կոպերը վարակվում
են տրախոմայով, այդ թա-
ղանթը քիչ ուռչում է և ծածկվում փոքրիկ բըշ-
տիկներով, վորոնց թիվը գնալով շատանում է:
Սկզբնական շրջանում մարդիկ սովորաբար խը-
նամք չեն տանում և անուշադիր են, վոր կո-
պերի տակ տվազ կա, և աչքերն առավոտները
թարախոտում են (ճպոտում, կտուր տալիս):

Առհասարակ տրախոմայով հիվանդն այդ
շրջանում բժշկի ոգնության չի դիմում, վորով-

հետև ցավ չի զգում և կարծում է, վոր թեթև
բան է, կանցնի ինքնիրեն: Հենց դրանով էլ
տրախտման վտանգավոր է, վոր իր սկզբնական
շրջանում աննկատելի չէ մնում:

Յերկրորդ օրջան

Սակայն հիվանդությունը
զնալով սասականում է.
բշտիկները շատանում են, և սպա նրանց մի
մասն սկսում է պայթել և դառնալ փոքրիկ խո-
ցեր:

Սոցերի տեղը մնում են սպիւններ, մյուս
կողմից էլ նոր բշտիկներ են աճելանում: Սպի-
ւները և բշտիկները տրորելով, աչքը զրդաում
են: Բիրը ծածկվում է դեղնամոխրագույն վա-
րագույրով (թուզով), վորը տեսողությունը խան-
գարում է:

Այս շրջանում աչքերը լցվում են արյունով,
սաստիկ արցունք է հոսում, և լուսին նայելը
դժվարանում է:

Թեթև հիվանդը միջանի որ իրեն հանգիստ
է պահում, աչքի գրգիռն անցնում է, իսկ ան-
քնությունից, ծխից և փոշուց նորից կրկնվում
է: Այդ դրությունը հիվանդի համար դառնում է
սովորական բան, և աչքն շատերը չեն դիմում
բժշկի սպնության:

Յերկրորդ օրջան

Վերջապես գալիս է վեր-
ջին՝ 3-րդ շրջանը, յերբ
արդեն տեղ չի մնում նոր բշտիկների համար, և

ամբողջ կոպի յետևը ծածկված է լինում սպի-
նեբով, վորոնք ձգում են կոպի յեզրը դեպի
յետ, փոխում են արտևանդանների ուղղութիւ-
նը, վերջիններս ել շարունակ խփում ու տրո-
ւում են աչքը (մազածեծ անում), խոցեր են
առաջ բերում հենց այնտեղ, վորտեղ բիւն է
յերևում: Սկսվում են սաստիկ ցավեր թե աչ-
քում և թե գլխում: Իվանդը գիշերները չի քը-
նում, ցերեկն ուտելիքից է զրկվում և յերկար
տանջվում:

Թեև ցավերը հետագայում անցնում են,
բայց աչքի վրա մնում է ընդմիշտ զանազան
մեծության սպիտակ հատ, Հատերը, վորոնց հա-
սարակ լեղվով թող են կոչում, մասամբ ծած-
կում են բիւր և մարդու տեսողութիւնը խան-
գարում: Կոպերի վրա գոյացած սպիւնները, բացի
աչք արորելը, ծածկում են և արցունքի ծակո-
տիւնները. արցունքից զուրկ աչքը չորանալուց
կարող է նույնպես կուրանալ:

Յրախոման լեռկաւ և
բծեկվում Ամեն մի Իվանդության
առաջն առնելը հեշտ է,

յերբ նա նոր է սկսվում:

Տրախոման շատ համառ Իվանդութիւն է, և
յեթե ժամանակին չբժշկվես, նա տարիներ է
քաշում և Իմնովին չի բժշկվում: Դժբախտա-
բար մարդիկ դիմում են բժիշկներին շատ ուշ,

Ձ-բդ և ավելի հաճախ Ձ-բդ շրջանում, լերը հի-
վանդությունն արդեն խորն արմատներ ե գցել:

Սահայն չպետք ե հուսահատվել. ճիշտ ե,
հնացած տրախոման դժվար ե բռն-ժվում, բայց
յեթե բժշկին դիմես և նրա խորհուրդներով ա-
ռաջնորդվես, աչքերդ կարող են փրկվել և չկու-
րանալ:

Ձգեսե և դիմել եե-
ֆիմենրից

Գյուղացին մասամբ բժըշ-
կական կենտրոններից հե-
ռու լինելով (մանավանդ

գյուղական աշխատանքների ժամանակ), բայց
գլխավորապես տգիտությունից, սովորություն
ունի աչքը ցավելու դեպքում դիմել հեքիմներին.
դա շատ սխալ բան ե, աչքի լուսի հետ խաղալ
չի կարելի. աչքի ցավը հասկանալը և բժշկելը
կարող ե միմիայն բժիշկը, վորը չերկար ժամա-
նակ սևսումնասիրել ե այդ հիվանդությունը
մասնագետների մոտ:

Ինչպես ասացինք, տրախոման խիստ վա-
րակիչ ե. վարակը հիվանդից առողջին ե փոխ-
վում աչքի թարախի և արցունքի միջոցով:

Որինակ՝ մեր գյուղացիները վատ սովորու-
թյուն ունեն. նրանք լվացվում են գյուղի մի-
ջով անցնող աղտոտ առվի ջրով. նույնը կա-
տարում են նաև այն քաղաքներում, վորտեղ
չսովորել չկա. Յեթե տրախոմայով հիվանդի լվաց-

վելուց հետո, միևնույն առվում, քիչ ցած, լճ-
վացվի առողջը, նա կարող ե առաջինի աչքի
թարախը ջրի միջոցով քսել իր աչքերին և վա-
րակվել:

Այսի քառախը յեւ
արցունքը վարակիչ են
Եւստո, միևնույն շորով, հաճախ գոգնոցով, սրը-
րում ե իր առողջ յերեխաների աչքերն ու
վարակում:

Վարակը դուրսությամբ կարող ե փոխանցվել
միատեղ, մի անկողնում քնելիս, փորովհետեւ
բարձին կարող են քսվել հիվանդի աչքի թա-
րախն ու արցունքները: Հիվանդները հաճախ
ձեռք են առնում իրենց աչքերին. նրանք կարող
են վարակել ուրիշներին բարեկեղով ու միևնույն
գործիքներ գործածելով, որինակ՝ արհեստանո-
ցում, դպրոցներում...

Տրախոման ազդա-
ների յեւ անցրագե-
ների հիվանդու-
թյուն ե
Քանի մարդիկ խիտ ապ-
րեն, այնքան նրանց շփու-
մը մեծ կլինի. հետևապես
տրախոմայի վարակը կա-
րող ե մասսայական բնույթ

ստանալ հանրակացարաններում, գորանոցնե-
րում, յեթե առողջապահության կանոններին
խստորեն չհետևեն: Մուխը և բնակարանի ծանր

ողը նույնպես նպաստում են տրախոմալի տա-
բածման, վորովհետև նրանք գրգռելով հիվանդի
աչքերը՝ շատացնում են թարախն ու արցունքը։
Տրախոմալով հիվանդի ներկայութունն ավելի
վտանգավոր է ընտանիքներում. ուստի այն
գյուղերում, վորտեղ թոնիրը, կենդանիները և
մարդիկ մի սենյակում են լինում, տրախոման
շատ է տարածված։ Դրա համար ել զարմանալի
չէ, վոր տրախոման աղքատների և անգրագետ-
ների հիվանդութունն է համարվում։

Յերևան քաղաքում, վորտեղ բնակչութուն-
նը կուլտուրապես ավելի բարձր է և քիչ թե
շատ մաքուր է ապրում, տրախոման համեմա-
տաբար քիչ է տարածված։ 1924/25 թվի դեպ-
րոցների հետազոտման հիման վրա տրախոմա-
յով հիվանդների թիվը Յերևանում կազմում եր
ընդամենը 5,5 տոկ։

Շենգավիթ գյուղում, վոր քաղաքին մոտ է
և արդեն բնակարանները գոմերից բաժանված
են—8 տոկ. (1926 թ.)։

Արտաշատ գյուղում արդեն 17 տոկ., իսկ
Շիրազլու (Դավալուի շրջան)՝ 25 տոկ.։

Նկատված է, վոր նյու-
կուլտուրապես ավելի
բարձր յերկրներում թապես ապահով և կրթված
տրախոման վերջա. ընտանիքներում տրախոման

ցել է

հազվագյուտ է կամ բոլո-

րովին չի պատահում, վորովհետև նրանք գիտեն,

վոր մաքուր ապրելով կարող են իրենց պաշտպանել վարակիչ հիվանդութիւններէց:

Կան այնպիսի լերկերներ, վորոնք, շնորհիվ իրենց բարձր կուլտուրայի և ձեռք առած միջոցների, բոլորովին ազատվել են տրախոմայից. որինսկ՝ Ասգլիան, Փրանսիան և Ամերիկան: Հայտնի յե, վոր Միացյալ Նահանգները վոչ մի տրախոմայով հիվանդի չեն թողնում մտնել իրենց լերկիւրը և կիս ճանապարհից լետ են դարձնում:

Այժմ մեր պետական որդանները ևս ջանք չեն խնայում բարձրացնելու մեր լերկրի առողջապահական և սանիտարական գործը: Ներկայումս մեզանում պրոֆիլակտիկ աշխատանքները մեծ մղում են ստացել աշխատավոր մասսաների մեջ. նրանց նպատակն է պարզել աշխատավորութեան առաջ իր թշնամիներին, վորովհետեւ պայքարը դուրին է դառնում, յերբ դիտես, թե ինչ հիվանդութիւն է տրախոման, ինչպես է դարձանում և տարածվում նա:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ՏՐԱԽՈՄԱՅՈՎ ԶՎԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ունենալ մաքուր ու լուսավոր բնակարան:

2. Սպիտակեղենը, անկողինը և հագուստը շուտ-շուտ փոխել և լվանալ:

3. Շուտ-շուտ լվանալ ձեռները սապոնով,
մանավանդ ուրիշի գործիքներին և իրերին ձեռք
տալուց հետո:

4. Անլվա ձեռքով աչքերին ձեռք չտալ:

5. Լվացվելու համար գործածել աղբյուրի,
հորի կամ քարով անցկացրած առվի ջուր:

6. Ունենալ առանձին սրբիչ:


7. Ընտանիքում մեկին ու մեկի աչքերը
կարմրելիս կամ ցավելիս, առանց հետաձգելու,
դիմել բժշկին:

8. Տրախոմալի դեպքում խմամքով բժշկվել
և միաժամանակ նախազգուշացնել ընտանիքի
մյուս անդամներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

1. Տրախոման վարակիչ և նա կուրացնում և 3
մարդուն 4
2. Տրախոման կոպերի հիվանդություն և 4
3. Առաջին շրջան 5
4. Յերկրորդ շրջան 5
5. Յերրորդ շրջան 5
6. Տրախոման յերկար և բժշկվում 6
7. Չպետք և դիմել հեքիմներին 7
8. Աչքի թարախը և արցունքը վարակիչ են 8
9. Տրախոման աղքատների և անդրադեռնների հի-
վանդություն և 8
10. Կուլտուրական ավելի բարձր յերկրներում տրա-
խոման վերջացել և 9
11. Ի՞նչ պետք անել տրախոմայով չվարակվելու
համար 10



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039671

(024)

Д-р Навасардян

Т Р А Х О М А

A $\frac{I}{4546}$



ԳԻՆԸ 3. 4.